

առաջ կ'երթար խոտոր ճամբաներ բըռ-  
նելով, որպէս զի հովիւը չկարենայ իր  
հետքերուն ետևէն գտնալ զինքը. բայց  
հովիւը ամեննեին աչքէն չիփախցնելով  
այծը, անդադար կը դիտէր և տեսաւ որ  
վերջապէս թիթերու մէջ մոտաւ. և գնաց  
տղուն քով, ստինքը բերանը դրաւ որ  
ծծէ, և այնպէս կեցաւ ինչուան որ տղան  
կշտացաւ. ետքը խանդակաթ մօր մը  
պէս, մերթ ձայներ հանելով՝ բոլորտի-  
քը կը պտըտէր, և մերթ լզելով կար-  
ծես թէ կը զբաղեցընէր զտղան: Լամնն  
մեծաւ զարմացմամբ մտաւ պղտիկ ան-  
տառին մէջ ու տեսաւ որ պղտիկ մանչ  
տղայ մ'էր, այնպէս փափկիկ, կայտառ  
ու գեղեցիկ, որ կարծես թէ այն խո-  
տերուն մէջ բուսած սիրուն ծաղիկ մըն  
էր. տեսաւ որ լաթերը կոկիկ ու զար-  
դարուն բաներ էին. վրան չուխայէ ըզ-  
գեստ մը կար, վիզը ոսկի օղ մը և մէկ  
կշտէն ալ պղտիկ փղոսկրէ դաշնակ մը  
կախած. այս բաներս տեսնալով՝ միտ-  
քը դրաւ թէ անշուշտ աղնուականի մը  
զաւակ է. բայց խելքը չէր հասներ թէ

ինչպէս աղնուականի մը տղայ այսպիսի  
խեղճութեան վիճակի մէջ ձգուած ըլ-  
լայ:

Լամնն առջի բերանը մտածեց որ վը-  
րայի զգեստը ու զարդերը առնու ու  
տղան հոն ձգէ. բայց ամաչելով՝ որ այ-  
ծը իրմէ աւելի մարդասէր պիտի գըտ-  
նուի, սպասեց որ գիշերը վրայ հասնի  
և այն ատեն տղան իր զգեստովը, զար-  
դերովը և այծն ալ միատեղ առաւ տա-  
րաւ իր Միրտալէ կնոջը: Միրտալէ տես-  
նալով զարմացաւ մնաց. և ետքը ինքն  
իրենը գալով, ինչ, այծերն ալ տղայ  
կը ծնանին եղեր, ըսաւ. ան ատեն լա-  
մնն ամեն բան տեղն 'ի տեղ պատմեց  
անոր և թէ ինչպէս այծը կը խնամէր  
զտղան. և առ զթոյն չիկրցաւ տղան  
հոն թողուկ որ մեռնի: Վերջապէս այր  
և կին մէջերնին որոշեցին որ զգեստը և  
զարդերը ծածուկ պահեն ու իրենց որ-  
դեգիր ընեն. և այծուն վրայ ալ մաս-  
նաւոր խնամք ունենան և տղուն անունն  
ալ հովուական անուամբ Դափնի դրին,  
որպէս զի անծանօթ մնայ:

## ԱՄԱՆՈՐ

Որպէս ի նշոյլ արփիասկիզբն այգուն աստեղ,  
Ծաղիկ հովտին, տունկ ամենայն դալարագեղ,  
Հզգեշերոյ մերկեալ ըզսուգ, զըստուեր մըթին,  
Լուսակարկաջ առաւօտեն ի յերփն յերփին.  
Բնութեան հանգէտ եւ տիեզերք ահաւանիկ  
Զուարթ առնուն փայլ, զի նոր կենաց քաղցր աւետիք  
Առ քո գալուստ, ով ամանոր, ծնունդ յաւերժից՝  
Սլացեալ թեթեւ գայ յերկնից,  
Աշտարակաց ի ծայրից :

Ի քաղցրալուր ձայն աւետեացդ, ով ամանոր,  
Որ ընդ երկիր ողբանըւագ գանգէր յառաջ,  
Հզգրաւ զուժեալ հընոյ ամին արդ անցաւոր  
Համբառնամք զաչ՝ հատեալ զմահու մըրմունջ նըւաղ,

Եւ անձկայրեաց առ քեզ որ գաս կարդամք ողջոյն .  
Ե՛կ , կենսաձիր բաշխիւք երկնից , ըզմիթ ցօղոյն  
կաթել ի սիրտ , յայտ տըմոյն  
Յարեւախարչ ծիլս հանգոյն :

Ի ծաւալել կենդանարար շընչոյդ ի մեզ ,  
Տըխրատեսիլ թառամութիւնք մեր տօթակէզ  
Որք առ հետովք անցեալ տարւոյ կացին աստէն ,  
Դալարասցին ապարթաճեմ պըճնիւք անդրէն ,  
Նորոյ կենաց առաւօտուն արբեալ ցօղով .  
Մի եւս հարաւ եւ ձիւնաբեր շնչեսցէ հով ,  
Այլ ետ ընդ ետ ծիծաղախիտ ծիլն ի ծըղին ,  
Անոյշ ծաղիկն ի ծաղկին ,  
Բըղխեսցէ վարդն ի վարդին :

Այլ ո՞հ , քանիցս ապերջանիկ բնութիւնս այս հէք  
Յափրշտակեալ քողածածուկ ընդ սին պատրանս ,  
Անդ ի դրախտին մուտս յերջանիկ անկաւ բեկ բեկ  
Ուր անթառամ թըւէր դիտել ծաղկունս գունեանս ,  
Զանապանեալ կապոյտ կանաչ սպիտակափառ ,  
Զդեղին , մեղոյշ ըզծերունին շողշող ի վառ .  
Եւ ոչ մատեան ի կարկառ  
Չեռք փունջ կապել բերկրարար :

Այսպէս յաւէտ հինու զանկուած իւր յոյս ընթեր .  
Ըզգեցուցեալ ըզվարդենին գարնանաբեր  
Գիրդ սաղարթուք , թերթիւք ծաղկանց ոսկետիպար ,  
Այլ առ նորօք յեռու եւ զփուշըն խայթահար :  
Զիարդ չըքնաղ ի տեսանել թուփն այն կանաչ  
Յափն առուակին յակճիռ հեզիկ ջուրցն ի կարկաջ ,  
Այլ ո՞հ եւ անդ լուռ նենդէ յոյս յիժ թիւնաւոր .  
Սէր դիւրախար վիրաւոր  
Գառնայ ի յետս ակընկոր :

Բայց դու եկ օն , եկ ամանոր լուսափետուր  
Եւ հաշտարար կացցես հրեշտակ ընդ սէր եւ յոյս  
Լուծեալ զպատիր զոստայն նենդիչ , զմանկ թաքթաքուր .  
Ի գնացս ոտիցդ , ի շող ական քո նորալոյս

Բաստ յարազուարճ յաղթ ձիթենւոյն ի հովանիս  
Վարսագեղեալ ընձիւղեսցի առ խինդ երկրիս  
Ի' այգորելեաց քոց զարդիս  
Ի դէմս յաւէտ ժըմտեսցիս :

Հ. Ա. Ե.

## ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԵՂԻ

—♦♦♦♦♦♦—

Սիպերիոյ բնակչաց նկարագիրը .

Սիպերիոյ անհուն տարածութիւնը (4,330,000 մղոն □) այսինքն կրկին եւրոպայի չափ, հազիւ 9,000,000 ժողովուրդ կը սնուցանէ հիմայ, իր ամենէն ծաղկեալ ժամանակը : Չունի պատմական յիշատակներ, չունի նաև բուսական ճոխութիւն . բայց հանգաբանը կրնայ լերանց վիճերը և երկրին խորերը իջնելով և մետաղաց տեսակները համբելով զուարճանալ . նոյնպէս կենդանաբանն ալ օտար երկրի կենդանեաց կմախքները հողոյ տակէն հանելով և անոնց վրայ նորանոր խորհրդածութիւններ ընելով, գիտութեան առանձին ճիւղ մը լուսաւորել . իսկ ովոր հետաքնին է քննելու և ճանչնալու իրեն նմանները, կրնայ քննել և թերևս քննելէն ետքը հառաջանք մ'ալ արձը-կել քննածներուն վրայ :

Սիպերիոյ բնակիչքը կազմողներն են խազակը, Ռուսք, և ուրիշ եւրոպացի գաղթականք . դարձեալ թաթարք, Մողոլք և ասոնց խառնուրդէն առաջ եկածները : Քաղաքաց և բոլոր զինուորական կայանից մէջ առջի երեքը միայն կը բնակին որոնց մէկ մասը երկրին տիրող զինուորաց սերունդ է, մէկալ մասն ալ յանցանաց համար հոն յաքսոր դատապարտուածք . ասոնց հետ խառնուած են յետոյ ուրիշ բաղդախնդիրներ, փախստականք, և տարաբաղդ վաճառականք, ամենքն ալ ապագանին շինելու յուսով : Արդեօք տեղը երջանկա-

ցուցեր է զասոնք, չեմ գիտեր, բայց վրանին կոշտութիւն և վայրենութիւն մը կ'երևայ . թէպէտե ասպնջականութիւննին և զուարթ բնութիւննին աշքի զարկած է և ամեն ճանապարհորդներէ պատմուած : Բայց այս ազօտ քաղաքականութիւնն ալ չէր ունենար Սիպերիա, զոր ունի հիմայ, եթէ Մեծն Պետրոս Շուետաց յաղթելէն ետքը անոնցմէ բազմութեամբ՝ ի Սիպերիայ չանցընէր, որոնք իրենց երկրին սովորոյթները և արհեստները մէկտեղ հոն փոխազբեցին . այս ալ գիտելու արժանի է, որ մինչդեռ Մեծն Պետրոս զՇուետաս հոն կ'աքսորէր՝ իրեւ չարաչար և սարսափելի պատիժ, այս գեղեցիկ արգասիքն ծագեցաւ : Առաջին դպրոցը հաստատեցին 'ի Դոպուլք 1713ին և առաջին դասախոսութիւններն եղան գերմաներէնի, լատիներէնի, գաղղիարէնի, աշխարհագրութեանն, թուաբանութեանն և նկարչութեանն : 1804ին գաղղիական, ուռւ և գերմանական մատենագրութեանն ճաշակն առնողներ կային . թէատրոններն ալ բացուած, խաղերն ալ սկսեր էին հանդիսանալ . նըշան Սիպերիացւոց մտաց և սրտի նորոգ կրթութեանը . բայց ասոնցմէ ետքը կենաց դիւրութիւնները և տեսակ տեսակ շուայլութիւններն յաջորդելն շուտ եղաւ . ափսոն որ այս գեղեցիկ աշխատանաց արդիւնքն քաղաքները միայն կրցան վայելել, և գեղերը ցանած ցը-